

## Տ. ՆՈՐԱՅՐ ԱԲԵՂԱ ՍԻՄՈՆՅԱՆ
(ավազանի անունը՝ Արման)

Ծնվել է 1980 թ. դեկտեմբերի 6-ին Էջմիածին քաղաքում:

1987-96 թթ. սովորել է Էջմիածնի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1996-97 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1997-2003 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2003 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի, ստացել է սարկավագության աստիճան:

2003 թ. գործավար-քարտուղար և թարգմանիչ է աշխատել Մայր Աթոռի Ինտերնետային բաժնում: Նույն թվականին Վեհափառ Հայրապետի փնօրհնությամբ սպասավորության է կոչվել ՀՀ Զինված Ուժերի Հոգևոր ծառայությունում:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: